Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2017-05

1.542-
Ա-44

„ԷՍ ԷԼ ՔԵԶ ՀԻՆԳ ՈՒ ԽԱՂ“

ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Արտատպած „Աղբիւր“ տարեգրից

Հեղինակութիւն

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՋԱՆԵԱՆԻ

ԹԷՒՐԻԶ

Ատրպատականի Հայոց Թեմական Արաքատիպ
Ցիւռատակ Վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզայէգեանի

1905

300
36-ԱՂ

Հարգարժան Խմբագրատեսչությանը՝ Արտասահման։ Երևան
15/XI-1919 թ.

„ԷՍ ԷԼ ԳԵԶ ՀԻՆԳ ՈՒ ԽԱՂ“

891.542-93-2
Բ-16

ԱՆԿԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԴՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

310
ԱՅ
Հ.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Мясник
Ա. ՍՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հեղինակում Ա.

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԹԻՒՐԻՋ (ԳԵՐՍԱՄՈՏԸՆ)

Արտասահմանի Հայոց Թեմական Արտաքին

Ցիտատակ Վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզայ Լզեանի

1905

ՄԵՏՍԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

26 .02. 2013

7933

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Մայրը — 30 տարեկան.
2. Արշակ, որդին — 8 տար.
3. Նազիկ, աղջիկը — 7 տար.
4. Տիգրան, Հարևանի տղան — 7 տ.

Բեմը ներկայացնում է մի հասարակ սենեակ, աջ ու ձախ կողմից դռներ, սեղան և երկու աթոռ. սեղանի վրայ դրած են թուղթ, գրքեր, թանաքաման։

„ԷՍ ԷԼ ՔԵԶ ՀԻՆԳ ՈՒ ԽՐԱՉ“

Մանկական Կատակերգութիւն երկու արարուածով

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ Ա.

Մայրը.

(Նստած յատակի վրայ ճախարակ է մանում երգելով)

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ.
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր։
Տիգրանիկս գուլբա չունի,
Հանդ է գնում ոտաբաց.
Արշակս էլ չուխայ չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։
Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր, սպիտակ մալանչներ.
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր.

(Վերջին տունը երգելիս մտնում է Արշակը եւ սեղանի գրքերը բերում մինչեւ երգի վերջանալը)։

Արշակ.

Մայրիկ, բա Նոր տարուն ինձ համար նոր շորեր չե՞ս կարելու։

Մայրը.

Նոր շորեր այն ժամանակ եմ կարելու, երբ

դասերդ լաւ սովորես, ուշք ու միտքդ զրքին լինի։

Աշակ.

Լաւ, վա՞ռ եմ սովորում դասերս։

Մայրը.

Թէ լաւ ես սովորում, ապա ինչո՞ւ հայոց լեզուից 2 ես ստացել։ (Ընդհատում է նախաբակ մանելը)։

Աշակ.

Հաւատացնում եմ, մայրիկ, լաւ եմ սովորում, բայց վարժապետը երկու է նշանակել։

Մայրը.

Սուտ խօսելը մեղք է, վարժապետը ոչ քո խելքին է, ոչ էլ իմ, լաւին՝ լաւ կնշանակի, վատին՝ վատ։

Աշակ.

Մայրիկ, հաւատացնում եմ քեզ, որ պարոն Թորոսեանը շատ քիչ է նշանակել ինձ։

Մայրը.

Բա ինչքան կուզէիր, որ նշանակէր։

Աշակ.

Հինգ ու խաչ։

Մայրը.

Հինգ ու խաչ... իսկ գիտես, որ հինգ ու խաչ ստանալու համար ամենալաւ աշակերտը պիտի լինիս դասարանումդ։

Աշակ.

Հէնց ամենալաւ աշակերտն էլ ես եմ։

Մայրը.

Երևում է թուանշանիցդ։ (կանգնում է).

Աշակ.

Անցեալ օրը, պարոն Թորոսեանը ինձ մի ոտանաւոր հարցրեց. ես էլ այնպէս ասացի անգիր, որ ընկերներիս բերանը բաց մնաց։

Մայրը.

(Մի կողմ). Արշակից այդպիսի բան սպասել. (Աշակին). Յետոյ. վարժապետը հաւանեց։

Աշակ.

Այո՛, շատ հաւանեց և ցուցակում մի ինչ որ բան գրեց. ասացի՝ վարժապետ, ինչ էք անում, ասաց՝ նշանակում եմ ցուցակում, որ դու ամենաառաջին աշակերտն ես։

Մայրը.

Յետո՞յ.

Աշակ.

Էլ ինչ յետոյ, հէնց իմացայ վկայականումս հինգ ու խաչ կըլինի, բայց տեսայ 2 դրած։

Մայրը.

(Մի կողմ). Այս անպիտանը իր փոքրիկ տեղովը ուզում է ինձ խաբել. (Աշակ-ին). Շա՞տ լաւ ես սովորում, հա՛, հապա ինչո՞ւ ամեն օր անճաշ են թողնում քեզ։

Աշակ.

Մայրիկ, ամեն օր ինձ երբ են անճաշ թողնում, որ ասում ես։

Մայրը.

Լաւ, ասենք թէ՝ ամեն օր չեն թողնում, երկու օրը մի անգամ հո՞ թողնում են։

Արշակ.

Հա, մայրիկ, էգպես կարող է պատահել, ուսումնարանում մնում եմ, որպէսզի դասս աւելի լաւ սովորեմ։

Մայրը.

— Ես լաւը գիտեմ, ինչպէս որ տանն ես, այնպէս էլ ուսումնարանում կլինիս։ (Ժողովրդին). Անցեալ օրը, ասում եմ, Արշակ, գնա ճուտերին կուտտուր, շուտ այստեղ արի, դասերդ պատրաստիր. կէս ժամ սպասեցի, մի ժամ սպասեցի՝ չեկաւ. ասացի գնամ տեսնեմ՝ ինչ է անում. գնացի տեսայ՝ հաւի ճուտերը խոհանոցն է արել, մի փայտ ձեռքն առել և խեղճ ճուտերին էստեղ-էնտեղ խփում սպանում է, սպանածն էլ մոխրի մէջ թաղում, որ ես չընկատեմ. լաւ է, որ շուտ վրայ հասայ, թէ չէ՝ բոլորին էլ կըկոտորէր. հինգ հատին թաղել էր արդէն, երբ վրա հասայ։ Աստուած դրան մի խելք տայ։ (Արշակին)։ Արշակ, եթէ միւս անգամ էլ անկարգութիւն անես, չսովորես, ծուլութիւն անես, իմացած եղիր, որ վարժապետիդ պիտի ասեմ ամեն օր քեզ անճաշ թողնի. հասկացար։

Արշակ.

Հասկացայ. մայրիկ, կաշխատեմ այսուհետ... անկարգութիւն չանել։

Մայրը.

Պէտք է դասերդ էլ պատրաստես։

Արշակ.

Լաւ, դասերս էլ կըպատրաստեմ, եթէ...

Մայրը.

Եթէ ինչ։

Արշակ.

Եթէ վարժապետին ասես հինգ ու խաչ դնի։

Մայրը.

Ասենք թէ վարժապետին ասացի, որ քեզ հինգ ու խաչ դնի. ախր իմ ասելով հօ չի՞ լինիլ. դու պէտք է աշխատես ջանասէր լինել. վարժապետիդ բոլոր պատուէրները ամենայն ճշտութեամբ կատարես, դասերդ լաւ սովորես, որ հինգ ու խաչ նշանակի։ Վերջապէս ինչ նշանակութիւն ունի թուանշանը. դու խօ թուանշանի՞ համար չես դպրոց գնում, գնում ես որ մարդ դառնաս։

Արշակ.

Մայրիկ, հէնց ասում ես է, ախր չեն թողնում դասերս սովորեմ։

Մայրը.

Ո՞վ չի թողնում.

Արշակ.

Ճանճերը, մայրիկ, ճանճերը։

Մայրը.

Տօ, այս ժամանակ էլ ճանճեր կըլինեն։

Արշակ.

Մայրիկ, եթէ ճանճերը չլինէին, ամենառաջին աշակերտը կըլինէի մեր դպրոցում։

Մայրը.

Տէր Աստուած, այսպիսի էլ տղայ կըլինի։ (Նրան) Ախր ճանճը ինչ է, որ ինչ անի քեզ։ Ամբողջ ամառը պարապ—սարապ թրև ես եկել, դասերդ չես կրկնել և հիմա էլ մեղքը գցում ես խեղճ ճանճերի վրայ։

Արշակ.

Ճանճերը ինձ շատ են խանգարել, մայրիկ։

Մայրը.

Ի՞նչպէս թէ խանգարել են, ախր, ճանճը ինչ է, որ ինչ խանգարի։

Արշակ.

Մայրիկ, դու նրա պզտիկութեանը մի նայիլ, գիրքը հէնց ձեռս էի առնում թէ չէ, մէկէլ էիր տեսնում մի անտէր ճանճ, որտեղից որ էր՝ ա՞ըզ՞զզ... գալիս էր ու դուզ քթիս ծէրին նստում։

Մայրը.

Ձեռով խփէիր, գնար կորչէր։

Արշակ.

Ձեռքով խփում էի, գնում էր ականջիս ծէրին նստում. էնտեղից էլ էի քշում, գալիս էր գըրքիս վրայ նստում, էն էլ դուզ դասիս վրայ. ուզում էի գիրքս ծալել ու մէջը ճխլել այդ անիրաւ կենդանուն, վեր էր կենում փախչում։ Էլի սր դասս սկսում էի կարդալ, մէկէլ էիր տեսնում ա՞ըզ՞զզ... գալիս քթիս ծէրին բռնում էր։ (Մորը). Դա՛ու որ լինէիր իմ տեղը, ինչ կանէիր։

Մայրը.

(Ժպտ.) Ի՞նչ պէտք անէի, ուշադրութիւն չէի դարձնիլ ամենևին։

Արշակ.

Լա՛ւ ես ասում. էն պզտիկ տեղովը գայ ինձ խանգարի, ես թողնեմ նրան անպատի՞ժ։ Ես էլ բարկանում էի, գիրքը ծալում մի կողմ դնում.—մայրիկ, գիրքը լաւ էի ծալում որ չբփչանայ—ու ընկնում այդ

անիծեալ ճանճերի ետևից. գիտես մայրիկ, օրը քանիսն էի սպանում. մի անգամ թաշկինակով զարկելով եօթը ճանճ սպանեցի։

Մայրը.

Օ՜, ի՞նչ մեծ քաջութիւն ես արել. կեցցես. եթէ ամեն օր ճանճերի հետ պատերազմես, լաւ դաս կըսովորես։ Լա՛ւ, Արշակ, ասենք թէ՝ ամառը շոգ էր, ճանճերը քեզ խանգարում էին, մի խօսքով՝ ծուլութիւն էիր անում. հիմա՞ ինչ կասես՝ երբ ճանճեր չկան որ քեզ խանգարեն։

Արշակ.

Մայրիկ, հիմա էլ խանգարում է...

Մայրը.

Ո՞վ.

Արշակ.

Հիմա էլ խանգարում է...

Մայրը.

Ո՞վ, ասա՛ տեսնենք.

Արշակ.

Հիմա էլ խանգարում է...

Մայրը.

Ա՛խր, ո՞վ է խանգարում, է...

Արշակ.

Հիմա էլ խանգարում է...

Մայրը.

Չլինի՞ Նազիկն է խանգարում.

Արշակ.

Ո՛չ.

Մայրը.

Դէ ասա տեսնենք ո՞վ է խանգարում. ընկերներդ են խանգարո՞ւմ։

Արշակ.

Ո՛չ.

Մայրը.

Բա ո՞վ է խանգարում.

Արշակ.

Հիմա էլ խանգարում է... մեր փիսօն.

Մայրը.

(Ծիծ). Այդպիսի անմիտ պատճառաբանութիւններով չես կարող արդարանալ։ Աւելի լաւէ, խելքդ գլուխդ հաւաքիր, դասերդ սովորիր, որ ժամանակին լաւ մարդ դառնաս։

Արշակ.

Հաւատացնում եմ քեզ, մայրիկ, եթէ վարժապետը ինձ 5 դնի, ամբողջ օրը տանը նստած դաս կըսովորեմ։

Մայրը.

Նա՛ լաւ, Արշակ. դու խելօք կաց, դասերդ պատրաստիր, ես էլ քեզ եմ հաւատացնում, որ վարժապետը 5 կըդնի։

Արշակ.

Մայրիկ, բա խակի չըխաղամ։

Մայրը.

Խաղին հօ ես հակառակ չեմ. առաջ դասերդ սովորիր։ յետոյ ինչքան կուզես՝ խաղա. միր դու ամենևին դաս չես սովորում, ամբողջ օրը խաղի հետևից ես ընկած, մի անգամ չըտեսայ քեզ դաս սովորելիս։

Արշակ.

Լաւ, մայրիկ, այսուհետ թէ էլ ինձ տեսնես խաղալիս, ինչ ուզում ես արա. 5-ի տեղ 15 անգամ բռունցքով տուր։

Մայրը.

Գիտես որ քեզ չեմ ծեծում, այդպէս ես ասում։ Լաւ, այդ էլ կըտեսնենք։

Արշակ.

Ախր, մայրիկ, խաղն էլ շատ լաւ բան է։ Դասս սովորելիս, մեր Հարևանի տղան—Տիգրանը, մէկ էլ ես տեսնում գալիս է ասում՝ «Արշակ, արի՛ խաղանք»։ բա՞ ես նրա խաթրը կոտրեմ։

Մայրը.

Ա՛յ որդի, հէնց նոր ասացի՝ որ խաղին հակառակ չեմ, ինչքան կուզես խաղա, բայց դասերդ էլ պատրաստիր։ Ա՛յ, քեզ օրինակ Նազիկը. ինչո՞ւ նա հայերէնից 5 ունի, իսկ դու—2։

Արշակ.

Բայց նա էլ թուաբանութիւնից է թոյլ, մինչդեռ ես 4 ունիմ։

Մայրը.

Նա աղջիկ է, քեզնից փոքր է, նրան ներելի է, բայց քեզ՝ ո՛չ։

Արշակ.

Լաւ, մայրիկ, էդպէս որ խօսում ես հա՛, Նազիկը լաւ գիտէ հայերէն, թէ՞ ես։

Մայրը.

Իհարկէ Նազիկը, նա քեզ պէս ծուլութիւն չի անում, տուած դասն էլ միշտ պատրաստում է։

Արշակ.

Ես էլ եմ պատրաստում։

Մայրը.

Դէ որ պատրաստում ես, ինչո՞ւ Նազիկի նման չես կարողանում կարդալ։

Արշակ.

Ուրեմն քո ասելով՝ Նազիկը ինձանից լաւ է կարդում։

Մայրը.

Իհարկէ։

Արշակ.

Ա՛յ ասում ես հա. դու նրա կողմն ես բռնում, մա՛յրիկ։

Մայրը.

Երկուսդ էլ ինձ համար միևնոյն էք, միայն թէ ես ճշմարտութիւնն եմ ասում։—Լա՛ւ, էդ խօսակցութիւնը թողնենք. ապա վերցրու գիրքը, կարդա՛ տեսնենք.

Արշակ.

(Մի կողմ) Բանս խարաբ ա. (Մօրը)—Ի՞նչ կարդամ, մա՛յրիկ։

Մայրը.

Գիրքը բաց արա, մի տեղից կարդա՛։

Արշակ.

Մա՛յրիկ, մի բան ասեմ.—անցած օրը ընկերներիցս մինը մի լաւ բան ասաց. ով որ օրը երեք անգամ, ասաց, մէկ առաւօտեան, մէկ կէսօրին և մէկ էլ երեկոյեան...

Մայրը.

(շարունք.) Դաս սովորի, նա լաւ տղայ կլինի։

Արշակ.

Ո՛չ, ո՛չ, մա՛յրիկ, մի լաւ բան։

Մայրը.

Հապա՞ ինչ։

Արշակ.

Ով որ, ասաց, օրը երեք անգամ, առաւօտը, կէսօրին և երեկոյեան չամչով փլաւ ուտի, նա գէլից չի վախենայ։

Մայրը.

(Զսպելով ծիծաղը, ժողովրդին) «Գայլի գլխին աւետարան կարդացին. ասաց՝ շո՛ւտ արէք, ոչխարը սարից անց կացաւ։ (Արշ-ին)։ Տո՛, խելո՛ք, ես գայլերի մասին եմ խօսո՞ւմ. ուշ ու միտքդ որտեղ է.—ասում եմ գիրքը բաց արա, կարդա՛ տեսնեմ։

Արշակ.

Ի՞նչ կարդամ է. իսկի մի լաւ բա՞ն կայ, որ մարդ բաց անի, կարդայ։

Մայրը.

Մահմադ Աստուած կարի. էդ ինչպէս է որ ուրիշների համար կայ, քեզ համար չկայ։—Բա՛ց արա, մի տեղից կարդա՛։

Արշակ.

(Գիրքը բերում է գլուխը շարժելով) Մա՛յրիկ, էստեղը դժուար է, մի ուրիշ տեղ բանամ։

Մայրը.

Լա՛ւ, համաձայն եմ, ուրիշ տեղ բաց արա։

Արշակ.

(Բաց է անում գիրքը եւ սկսում կակազելով կարդալ)

Մայրը.

Տեսնում ես, կարդալ չես իմանում։

Արշակ.

(Զարմանքով) Ո՞վ չիմանում կարդալ, մայրիկ։

Մայրը.

Արշակը։

Արշակ.

Մայրիկ, լաւ գիտեմ կարդալ, բայց այս անգամ քէֆս տեղը չէ։

Մայրը.

Լաւ, էդ թողնենք. ապա կարո՞ղ ես մի ոտանաւոր ասել։

Արշակ.

Ո՞ր ոտանաւորն ասեմ։

Մայրը.

Հէնց սրը լաւ գիտես։ Հա, ասում էիր թէ՝ «Դարբին» ոտանաւորը լաւ գիտեմ, ապա այն ասա։

Արշակ.

Գիտեմ, բայց... մայրիկ, էն լաւը չէ։

Մայրը.

Շատ լաւն է, դէ գիտես, ասա։

Արշակ.

(Գլուխը քորելով) Մայրիկ, սկիզբը մոռցա ընկել ա։

Մայրը.

Լաւ, սկիզբը կլիշեցնեմ քեզ։

Արշակ.

Գուցէ մի խօսք էլ մէջերքից մոռացած լինիմ։

Մայրը.

Այն էլ կըլիշեցնեմ։

Արշակ.

(Քիչ լռութիւնից յետոյ) Մայրիկ։

Մայրը.

Հը՛։

Արշակ.

Գրքի վրայ ասեմ, թէ՞ բերանացի։

Մայրը.

Բերանացի ասա. բերանացի։

Արշակ.

Բա իսկի գրքին չընայեմ.

Մայրը.

Ի՞նչ կարիք կայ նայելու. չէ՞ որ ասում էիր թէ՝ «Դարբին» ոտանաւորը վարժապետի մօտ անսխալ ասել եմ։

Արշակ.

Այո՛, բայց... (գլուխը քորելով)։

Մայրը.

Էլ ի՞նչ բայց... թէ գիտես, ասա, էլի։

Արշակ.

(Մի կողմ) Նեղն ա լծել ինձ մայրիկս, սուտս բռնուելու ա։ (Մօրը) Գիտեմ, մայրիկ, բայց ամբողջը չըգիտեմ բերանացի։

Մայրը.

Վնաս չունի, ինչքան գիտես, այնքանն բաւ։

Արշակ.

(Հազալով) Ի՞նչպէս է սկսւում, մայրիկ.

Մայրը.

«Կըռանը ձեռքին, գնդանն առաջին».

Արշակ.

(Կրկնում է) Կըռանը ձեռքին, գնդանն առաջին. ը՞. ը՞.. կըռանը ձեռքին, գնդանն առաջին... կըռանը ձեռքին, գնդանն առաջին...

Մայրը.

Քիթ երես մրոտ, դարբնոցի միջին.

Արշակ.

(Կրկն.) Քիթ երես մրոտ. դարբնոցի միջին... ը՞... (Կրկնում է մի քանի անգամ) Փուքսը փուհ. հա՛ փուհ, փչում է փչում, փուքսը փուհ հա՛ փուհ փըչում է, փչում, փուքսը փուհ հա՛ փուհ, փչում է, փչում, փուքսը փուհ հ՞ա...

Մայրը.

Տո՛, ինչ ես փուհ հա՛ փուհը քցել...

Արշակ.

Մայրիկ, գրքի մէջ էդպէս է գրած։

Մայրը.

Ամօթ քեզ, չես իմանում, և ուզում ես ինձ հաւատացնել, որ այդ ոտանաւորը շատ լաւ գիտես։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/31 1922
Ереванъ, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք եւ Նազիկ

Նազիկ.

(Ներս է մտնում երկու խնձոր ձեռին) Մայրիկ ջան, մայրիկ, գնացի հօրեղբօրս տուն. տիկին Նազլուն երկու խնձոր տուաւ, ասաց՝ մէկը դու վերցրու, մէկը տուր Արշակին. ա՛ռ Արշակ, տես ի՞նչ սիրունն է, է։

Մայրը.

Ափսոս չէ որ այդ խնձորը նա ուտի՞, մի ոտանաւոր էլ չըգիտէ անգիր։

Նազիկ.

Ի՞նչ ոտանաւոր է, մայրիկ.

Մայրը.

«Դարբին» ոտանաւորը։

Նազիկ.

Կըռանը ձեռքին, գնդանն առաջին։

Մայրը.

Հա՛, Նազիկս, դու գիտե՞ս, կարո՞ղ ես ասել։

Նազիկ.

Ինչու չգիտեմ, գիտեմ, մայրիկ, կուզես ասեմ։

Արշակ.

(բրուտած) Գիտեմ, գիտեմ. ինչ գիտես, ես քեզանից լաւ գիտեմ։

Մայր.

Ապա՛, Նազիկ, մի ամաչացրու նրան։

Նազիկ.

«Կռանը ձեռքին, զնդանն առաջին,
Քիթ-երես մրոտ դարբնոցի միջին,
Կաշուէ գոգնոցը առաջը կապած,
Լռիկ կանգնած է մեր Խաչօ դարբին։
Փուքսը փուհ հա փուհ, փչում էփչում,
Կայծեր ու մոխիր...

Արշակ.

(Մատը բարձրացնելով). Մայրիկ, մայրիկ, միտս ընկաւ, ես ասեմ։

Մայրը.

Դէ ասա։

Արշակ.

Փուքսը փուհ հա փուհ փչում է, փչում, փուքսը փուհ հա փուհ փչում է, փչում, փուքսը փուհ հա փուհ ը՜ ը՜... փուհ հա փուհ...

Մայրը.

«Փուհ հա փուհ» անելուց բան չի դուրս գալ. Նազիկ, շարունակիր։

Նազիկ.

Փուքսը փուհ հա փուհ, փչում է, փչում,
Կայծեր ու մոխիր դէս ու դէն փռում.
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,
Սաստիկ տաքիցը վառուում, կարմրրում։
Խաչօն հանում է երկաթի շերտը
Զնդանի վրայ կռանով ծեծում.
Շինում նրանից պայտ, մեխ ու կացին,
Եւ խսկոյն ջրի տաշտակը կոխում։

Մայրը.

Ալրիս, աղջիկս. այ այնպէս կասեն է, անշնորհք։

Արշակ.

Անշնորհքը ես չեմ, մայրիկ։

Մայրը.

Ապա ով է։

Արշակ.

Նազիկն է։

Մայրը.

Երևում է, մի ոտանաւոր էլ չիմացար ասել։

Արշակ.

Մայրիկ, կուզես ուրիշ ոտանաւոր ասեմ։

Մայրը.

Դէ ասա։

Արշակ.

(Ժողովրդին). Բա Նազիկն ասի, ես չասեմ. (Ասում է ձեռքերը շարժելով)։

Կրպօն խփէ, Խէպօն խաղայ.
Ակլէ, տկլէ տընազ է,
Էծիկ—մէծիկ բզէզ է,
Օ՛ֆ, տիւֆ, նազարա,
Հար բաբա հարիսա.
Քաթիպի կոճակ,
Պընէ փլոճակ,
Ճըրթ-փըրթ։

Մայրը.

Էդպիսի ոտանաւոր ասելում լաւ ես։ Բաւական

է, բաւական, հանգիստ մնացէք մինչև գալս (դուրս է գնում)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն սենեակը առանց ճախարակի.
Սեղանի վրայ մրգ ողց, նաեւ խնձոր։

ՏԵՍԻԼ Ա

Արշակ, Նազիկ եւ Տիգրան.

Արշակ.

Լաւ, Նազիկ, կըտեսնես թէ՝ այսուհետև ով լաւ կըսովորի դասը. ես էլ քեզ պիտի ամաչացնեմ։

Նազիկ.

Ամաչացրու, եթէ կարող ես։
(Պառկում մի բանի վայրկեան)

Տիգրան.

(Մտնելով). Բարև Նազիկ, բարև Արշակ. բա ինչու էք այդպէս լուռ ու մունջ կանգնել։

Արշակ.

Ի՞նչ անենք.

Տիգրան.

Ի՞նչ պիտի անենք. ամեն օր ինչ էինք անում։

Արշակ.

Խաղում էինք։

Տիգրան.

Դէ հիմա էլ խաղանք։

Արշակ.

Ախը, ուզում եմ դաս սովորել։

Տիգրան.

Է՜, յետոյ կսովորենք, ես էլ դեռ չեմ սովորել։

Արշակ.

Լաւ, խաղանք, խաղանք, խաղանք. Նազիկ, դու էլ կըխաղաս։

Նազիկ.

Ինչու չէ. դասս սովորել եմ արդէն. բայց ո՞ըտեղ խաղանք.

Արշակ.

Ո՞ըտեղ պիտի խաղանք, այստեղ։

Նազիկ.

Գնանք դուրս խաղանք։

Արշակ.

Մէկէլ ով է գնում դուրսը. այստեղ լաւ է։

Նազիկ.

Ախը, փոշի կանենք այստեղ, մայրիկը կըբարկանայ։

Տիգրան.

Լաւ է ասում Նազիկը, էստեղ փոշի կանենք։

Նազիկ.

Ի հարկէ փոշի կանենք. իսկ փոշին մեզ վընաս է։

Արշակ.

(Բարկացած) Էդ քո գործը չէ, դու սուս կաց. էդ էլ էն չի, որ ասես թէ՝ քեզանից լաւ եմ սովորում։

Նազիկ.

Մայրիկը ինձ պատուիրել է, որ տանը չխաղամ, ես մայրիկիս խօսքին կըլսեմ։

Արշակ.

Դու չե՞ս ուզում ուրեմն մեզ հետ խաղալ։

Նազիկ.

Ուզում եմ, բայց ոչ սենեակում։

Արշակ.

Դէ որ այդպէս է, գնա։

Նազիկ.

Առանց քո ասելուն էլ ես պիտի գնամ մայրիկին ասեմ, որ Արշակը դաս չի սովորում, փոշի է անում։ (Դուրս է գնում)։

ՏԵՍԻԼ Բ.

Արշակ եւ Տիգրան

Արշակ.

Տիգրան, ի՞նչ խաղ խաղանք։

Տիգրան.

Ինչ ուզում ես՝ խաղանք։

Արշակ.

Դեռ ա՛րի մի մի խնձոր ուտենք. (մօտենում են սեղանին եւ մի մի խնձոր վերցնելով կրծոտում)։

Արշակ.

Մայրիկս, որ միշտ ինձ խնձոր տայ, դասերս լաւ կըսովորեմ։

Տիգրան

(Ուտելով) Անխելք, խնձորով պիտի դասդ սո-

վորե՞ս։ Ես կուզէի որ միշտ դաս լինէր, շատ կարդալինք, շատ բան սովորէինք. ես շատ եմ սիրում ուսումնարանը։

Արշակ.

Ես էլ եմ սիրում ուսումնարանը, այնտեղ լաւ է խաղալու համար. բայց որ վատ թուանշան են դնում, մարդու սիրտը կոտրւում է. ուրիշ առարկաներից լաւ եմ, բայց հայերէնից 2 ունիմ։ Լսի՛ր, Տիգրան, պարսկերէն համարեա չըգիտեմ, բայց 4 են դրել։

Տիգրան

Է՛հ, պարսկերէնը մեր ինչի՞ն ա պէտք. հայերէնը պիտի լաւ սովորենք, հայերէնը... ես հայերէն լաւ գիտեմ, բայց պարսկերէն այնքան չէ։

Արշակ.

Ապա դո՞ւ լաւ գիտես պարսկերէն, թէ՞ ես։

Տիգրան

Իհա՛րկէ ես։

Արշակ.

Չէ՛, ներողութիւն, ես քեզանից լաւ գիտեմ։

Տիգրան

Դէ որ էդպէս ես ասում, ես խօսքեր հարցնեմ, տեսնեմ կիմանա՞ս։

Արշակ.

Չէ՛, առաջ ես հարցնեմ.

Տիգրան

Դէ լաւ, հարցրո՛ւ։

Արշակ.

Ապա ինչ կասեն գլխին.

Տիգրան

Գլխին կասեն... ը՜... սար.

Ս.rcակ.

Դեռ մի ժամ էլ մտածում ես, շուտ ասա էֆ։

Տիգրան.

Աչքիս վրայ. շուտ շուտ կասեմ։

Ս.rcակ.

Լաւ. ապա մազերին ինչ կասեն։

Տիգրան.

(Մտածելով) մազերին... ը՛ ը՛ մտիս ա էֆ. լեզուիս ծէրին ա. (մի կողմ) Ի՞նչ եմ երկար մտածում։ (Ս.rc.-ին) Ս.rշակ, գիտես մազերին ինչ կասեն։

Ս.rcակ.

Հը, ինչ կասեն։

Տիգրան.

Մազերին կասեն՝ սարախոտ։

Ս.rcակ.

(ծիծաղ) Հա՛, հա՛, հա՛. լաւ պարսկերէն ա։ Ճակատին ապա ինչ կասեն։

Տիգրան.

Սարագաշտ։

Ս.rcակ.

Աչքերին։

Տիգրան.

Սարածակեր։

Ս.rcակ.

(Գլուխը շարժ. ժպտ.) լաւ, լաւ. ականջներին։

Տիգրան.

Սարապըտրհան։

Ս.rcակ.

Քթին։

Տիգրան.

Սարապըզպըզ։

Ս.rcակ.

Բերանին

Տիգրան.

Բերանին կասեն՝ սարաճամճամ։

Ս.rcակ.

(Մի կողմ) Էդ Բաղդադի պարսկերէն է հա։ Տիգրան, բա վզին ինչ կասեն։

Տիգրան.

Դէ վզին էլ կասեն՝ սարակոթ։

Ս.rcակ.

(Ծիծ.) Հա՛, հա՛, հա՛... տո՛, էդ տեսակ պարսկերէն խո՛ ես քեզանից լաւ գիտեմ. ապա դու հարցրու, ես ասեմ։

Տիգրան

Լաւ, կըհարցնեմ։ Ապա ինչ կասեն լուին։

Ս.rcակ.

Է՜, լուն շատ պզտիկ ա։

Տիգրան

Լաւ, պզտիկը չեմ ասիլ. ինչ կասեն ուղտին։

Ս.rcակ.

Ուղտին, ը՛, ը՛, ը՛... Է՜, էդ էլ շատ ա մեծ։

Տիգրան.

Լաւ, ոչ մեծը կասեմ, ոչ փոքրը։ Ապա ինչ կասեն թռչունին։

Արշակ.

Թռչունին կասեն—ը՛... թռչեմ գեօգայ.

Տիգրան.

Մողէսին

Արշակ.

Շուռ տամ քօլայ։

Տիգրան.

Բա՛ գորտին ինչ կասեն։

Արշակ.

Դէ գորտին էլ կասեն... լօք տամ գեօլայ։

Տիգրան.

Ա՛խպէր, թէ ես աղուէսն եմ, դու էլ պոչն ես։ Լա՛ւ միտս գցեցիր, դու կարո՞ղես գորտի պէս կըռկըռալ։

Արշակ.

Լա՛ւ։

Տիգրան.

Ապա՛ դէ կըռկըռա՛։

Արշակ.

Ինչո՞ւ. ես մենակ կըռկըռամ, որ վրաս ծիծաղե՞ս. աւելի լաւ է միասին անենք։—Տիգրան, դու տեսնե՞լ ես, թէ գորտերը ջրի մէջ ինչպէս են կըռկըռում։

Տիգրան.

Շատ։

Արշակ.

Դէ եկ գորտեր դառնանք։

Տիգրան

Լա՛ւ. գորտերը չորս ոտք ունին, նրանք

ման գալ չըգիտեն, այլ ցատկում են. ա՛յ տես, դու էլ ինձ նման արա՛. (Զորեքթաք է տալիս եւ ցատկում զորտի պէս, Արշակը հետեւում է նրան)։

Տիգրան.

Քեռին մըռըլա, քեռին մըռըլա, քեռին մըռըլա.

Արշակ.

(Ցատկ.) Ե՞ռփ, ե՞ռփ, ե՞ռփ։

Տիգրան.

Մէկէկէլ օռը, մէկէկէլ օռը, մէկէկէլ օռը։

Արշակ.

Ղո՞ռթ, ղո՞ռթ, ղո՞ռթ։ (Ասում են նաեւ խառն. այսինքն՝ երբ Տիգր.-ը ասում է «Քեռին մըռըլա... միեւնոյն ժամանակ Արշակը կրկնում է՝ ե՞ռփ, ե՞ռփ..՝ այսպես շար.)։ Բաւական է, Տիգրա՛ն, մեզ տեսնող լինի, ինչ կասի. (Վեր են կենում)։

Տիգրան.

Արշա՛կ, արի մի քիչ էլ դասներիս երեսին նայենք, հա՛։

Արշակ.

Է՞, բան չունի՞ս. առանց էն էլ գիտեմ դասս։

Տիգրան.

Արշա՛կ, եկ տեսնենք մեզնից ո՞րը լաւ կը կարդայ։

Արշակ.

Ի՞հարկէ ես։

Տիգրան.

Դէ գիրքը բեր տեսնենք։

Արշակ.

(Դժկամ) Է՜. ինչ հարկաւոր է։

Տիգրան.

Ախը, ասում ես, թէ՝ քեզանից լաւ գիտեմ. դէ բեր տեսնենք. էլի։

Արշակ.

Խօսք չըկայ, որ ես քեզանից լաւ գիտեմ, միայն թէ... գիտէս ինչ, Տիգրան, գրքին շատ նայելուց աչքերս ցաւում են։

Տիգրան.

Մահանադ Աստուած կտրի. շատ քիչ կըկարդանք։

Արշակ.

Տիգրան, մի լաւ բան միտս ընկաւ. գնանք դուրս, այնտեղ կասեմ։

Տիգրան.

Ներողութիւն, դեռ գիրքը բեր կարդանք, լեռոյ։

Արշակ.

(Ուզում է դուրս գնալ) Տիգրան, չե՞ս գալիս։

Տիգրան.

Ո՞ւր։

Արշակ.

Բագը։

Տիգրան.

(Առաջը կտրելով) Էյ, էդ ուր ես փախչում. կարծում ես թէ՝ քեզ բաց կըթողնեմ. արի հաստատիր, որ դու ինձանից լաւ գիտես կարդալ։

Արշակ.

Իհարկէ, լաւ գիտեմ. բան ասաց. դէ գիրքը բեր։ (Ժողովին) Ա՛յ մի հեշտ տեղն ընկնի ինձ։

Տիգրան.

(Վերցնելով գիրքը) Արշակ, բաց անենք. որտեղը որ եկաւ, էնտեղն էլ կարդանք, հա՞։

Արշակ.

(Գլուխը քորելով) Համաձայն եմ։

Տիգրան.

(Վերցնում է գիրքը եւ բաց անում) Դէ կարդա։

Արշակ.

(Կարդում է կակազելով) աա... բեգա... կը... դուրս...դուրս է...է...ե...ե...եկել պզ...պզ..պզ...պզ... պզ պզպըզալով։

Տիգրան.

(Մատով ցոյց տալով) Էս պզպըզալով է, չե՞ս տեսնում ղ-է.

Արշակ.

Ախը խսկի ղ-ի նման չի. լաւ չի գրած։ (Շար.) շողդ...շողդը...քը հե... հե...հեր...թից...թից...ներս... է... է ընկել... շող... շող... շողա... լով։

Տիգրան.

(Առնելով գիրքը Ա-ի ձեռքից) Դու լաւ չես կարդում, տո՛ւր էստեղ. ա՛յ էսպէս կըկարդան։ (Կարդում է անսխալ)

Արեգակը դուրս է եկել պսպղալով,
Շողքը հերթից ներս է ընկել շողշողալով,
Ծիտը ծառին կրչկրչում է ծըլը-ըլալով,

Զորումն առուն քըչքըչում է վըշվըշալով,
Ծոյլ տղայի քունն է տարել խռըմփալով,
Տրեխները շունն է տարել մըռմըռալով։

Տեսա՞ր.—Այսպէս կըկարդան։

Արշակ.

Է՜. Թողնենք կարդալը. դու կարո՞ղ ես աքաղաղի պէս կանչել։

Տիգրան.

Ինչու չէ. ծո՛ւղրո՛ւղո՛ւ։

Արշակ.

Չէ, դու չես իմանում. ա՛յ էսպէս կըկանչեն. (Հպարս հպարս կանգնում է աքաղաղի պէս եւ ձեռքերը ազդրերին խփելով երկար «ծուղրուղու,» կանչում)։

Տիգրան.

Խոստովանւում եմ, այդ բանում դու ինձ յաղթեցիր։

Արշակ.

Տիգրան, արի, «Հաւն ու աքաղաղը» ներկայացնենք. ես այն գիտեմ բերանացի։

Տիգրան.

Լա՛ւ, ներկայացնենք. դէ սկսիր։

Արշակ.

Չէ, դու սկսիր։

Տիգրան.

Դու սկսիր, դու լաւ ես ծուղրուղու կանչում։

Արշակ.

Լա՛ւ, ես կըսկսեմ։

Ծո՛ւղրո՛ւղո՛ւ... սանամէր, էն մէկ հաւ կար ո՞ւր գնաց։

Տիգրան.

Ծարաւ աղբիւր կուլ գնաց։

Արշակ.

Ի՞նչ կար կտուց.

Տիգրան.

Չիր ու չամիչ։

Արշակ.

Ո՞ւր էր տանում.

Տիգրան.

Հարս ու փեսին.

Արշակ.

Հարսն ո՞ւր էր նստել։

Տիգրան.

Ոսկէ թախտին։

Արշակ.

Ի՞նչ է եփել։

Տիգրան.

Կո՛րկո՛տ։

Արշակ.

Ո՞վ է բերել։

Տիգրան.

Պզտի լակո՛տ։

Արշակ.

Ո՞վ է տարել.

Տիգրան.

Քաչալ Ակոբ։

Արշակ.

Ո՞ւր է դրել։

Տիգրան

Բաց պատուհան։

Արշակ.

Ո՞վ է կերել։

Տիգրան.

Կարա փիշիկ։

Միասին.

Վա՛յ կարա-փիշիկ, վա՛յ կարա-փիշիկ, քո մէրն ուտի քո թըշիկ։

Արշակ.

Տիգրան, արի՛ հիմա էլ «կատու-կատու» խաղանք։

Տիգրան.

Տո՛, չէս թողնելու մի փոքր շունչ առնենք. աւելի լաւ է, հիմա էլ դասներս սովորենք։

Արշակ.

Է՛լի դա՛ս, տո՛ բաւական է. քիչ դասի անուն տուր. հիմա խաղի ժամանակ է, խաղի։

Տիգրան.

Դու գիտես, ես քեզ համար եմ ասում, թէ չէ՝ ես դասս պատրաստել եմ արդէն։

Արշակ.

Տիգրան, դու տեսել ես թէ՝ ինչպէս են կռւում կատուները, ես շատ եմ տեսել. գլուխները ծռում են՝ աչքերը դէս ու դէն շուռ տալիս և ճանկերով այսպէս անում. (վերջին խօսքերն ասելիս բարերով խփում է Տիգրանի գլխին)։

Տիգրան.

Տո՛ կամաց, էդ խօ խփեցիր։

Արշակ.

(Ծիծաղ.) Հա՛, հա՛, հա՛... ո՛չինչ, ձևն եմ ցոյց տալիս։ Դէ՛ սկսենք։

(Իրարից հիչ հեռու կանգնում են եւ կատուների պես «միա՜ու...» անելով մօտենում են ու կռւում։ Այդ ժամանակ մտնում է Նազիկը եւ «փիշ, փիշ» ասելով բաւկինակով զարկում սրա-նրա գլխին մինչեւ որ բաժանւում են)։

ՏԵՍԻԼ Գ.

Արշակ, Տիգրան, Նազիկ եւ վերջը մայրը.

Նազիկ.

Լա՛ւ կատուներ էք եղել. այս ինչ փոշի էք բարձրացրել սենեակում։

Արշակ.

Ներողութիւն, մենք չենք փոշի արել։

Նազիկ.

Ապա ո՞վ է արել։

Արշակ.

Ինքն իրան է փոշի բարձրացել։

Տիգրան.

Անխելք, ինքն իրան փոշի կըբարձրանա՞յ։

Արշակ.

Ինքն իրան չէ, դրսից եկաւ, քամին բերեց։

Նազիկ.

Մայրիկը էս բոպէիս կըգայ. որ տեսնի, ինչ կասի. քանի անգամ է քեզ ասել՝ որ տանը չըխաղաս։

Արշակ.

Իբր թէ դու էլ բան ասացիր. մայրիկը ամե-

Նևին հակառակ չէ խաղալուն։

Տիգրան.

Լաւ, Նազիկ, մայրիկիդ ոչինչ չասես, միայն թէ այնպէս խաղ չենք խաղալ, որ փոշի բարձրանայ։

Նազիկ.

Ի՞նչ էք ուզում խաղալ.

Տիգրան.

Բառախաղ տանք, բառախաղ։

Արշակ.

Ես մատս բարձրացնում եմ։

Նազիկ.

Այդ տեսակ խաղերի ես էլ կըմասնակցեմ։

Արշակ.

Նազիկ ջան, մայրիկին ոչինչ չես ասիլ, հա։

Նազիկ.

Լաւ, այս անգամ ոչինչ չեմ ասիլ։

Արշակ.

(Ժող-ին) Ա՜յ ջան, այս անգամ էլ քեռթակից ազատուեցի։—Դէ, ուղիղ կանգնեցէք, առաջ ես պիտի հարցնեմ։ – Տիգրան, ասա հաց։

Տիգրան.

Հաց։

Արշակ.

Բերանդ բաց, վազի ջաղաց։

Արշակ.

Նազիկ, ասա վեց։

Նազիկ.

Վեց.

Արշակ.

Մեծ նանը քեզ խոտեց, գլխիդ ջուխտ ձեռքով բամփեց, ծվվոցդ վեր արեց։

Արշակ.

(Տիգր.-ին) Ասա բրինձ։

Տիգրան.

Բրինձ։

Արշակ.

Մատաղ լինիս ինձ։ Նազիկ, ասա եօթը։

Նազիկ.

Եօթը։

Արշակ.

Բերանդ թիու կոթը։

Տիգրան

Բաւական է, ինչպան դու ասեցիր, հիմա էլ թող ես հարցնեմ։

Արշակ.

Լաւ. հարցրու։

Տիգրան.

Նազիկ, ասա ութ։

Նազիկ.

Ութ։

Տիգրան.

Ուտես մի կողով թութ։—Արշակ, ասա դուռը։

Արշակ։

Դուռը։ – Տիգրան, ընկնես ջուրը։

Տիգրան.

Նազիկ, ասա երեք։

Նազիկ.

Երեք։

Տիգրան.

Արշակի կողքը քերենք։

Արշակ.

Ինչո՞ւ իմ կողքը քերենք, և ոչ Նազիկի։

Տիգրան։

Քո կողքը շատ է հաստ, պէտք է մի քիչ քերենք, որ բարակի։

Նազիկ.

Տիգրան, հիմա էլ թող ես ասեմ։

Արշակ.

Դու չես կարող։

Նազիկ.

Ինչո՞ւ դու կարող ես, ես չեմ կարող։

Տիգրան.

Լա՛ւ, թող հիմա Նազիկն ասի։

Արշակ.

(Գլուխը տատանելով) Թո՛ղ ասի տեսնենք։

Նազիկ.

Արշա՛կ, ասա՛ ծի՞ա։

Արշակ.

(Արհամար.) Ծի՞ա։

Նազիկ.

Ուտես մախոխ։

Արշակ եւ Տիգրան (ծիծաղ)

Այդ չեղաւ, Նազիկ, չըբռնեց։

Արշակ

Տեսնո՞ր, որ ասացի չես կարող։ —Ապա դու ասա՛ ծի՞ա է.

Նազիկ.

Ծի՞ա է։

Արշակ.

Նազիկն անմիտ է։

Նազիկ.

(Նեղանալով) Օ՛, ես անմիտ չեմ։

Տիգրան

Նա՛զիկ, ասա՛ հաւ է։

Նազիկ.

Հաւ է։

Արշակ.

Նազիկը լաւ է։

Նազիկ.

Տեսնո՞ւմ ես, Արշա՛կ, Տիգրանը քեզանից լաւ է ասում։

Արշակ.

Դու էլ ես լաւ ասում։ Է՜, բաւական է. հիմա եկէք ձեզ մի լաւ բան ասեմ. լաւ միտս ընկաւ. եկէք աչքա՛-կա՛-պա՛ւ-կի՛ խաղանք։

Տիգրան և Նազիկ.

Եկէք, եկէք։

Արշակ.

Առաջ ո՞ւմ աչքերը կապենք։

Տիգրան.

Իմ աչքերը կապեցէք։ (Արշակը կապում է Տիգրանի աչքերը թաշկինակով, եւ ապա զարկելով մեջքին ասում— «մէկ, երկու, երեք,» ու փախչում)

Նազիկն էլ կրկնում է նոյն բանը։ Մի երկու պտոյտ անելուց յետոյ, որի ժամանակ, ի հարկէ,

մէջքին խփում են ասելով՝ «ինձանում», բռնում է Արշակին ու ասում՝ «բռնեցի, բռնեցի, հիմա էլ բեր քո աչքերը կապենք»

(Տիգրանը և Նաղիկը կապում են թաշկինակով Արշակի աչքերը և ըստ առաջնոյն սկսւում է խաղը. մի երկու անգամ Արշակի մէջքին հասցնելուց յետոյ, իրար ականջի փսփսում են և ոտերի ծայրերի վրայ լուռ ու մունջ հեռանում բեմից. իսկ Արշակը մընում է պտոյտ պտոյտ անելիս)

Արշակ.

«Ո՞ւր էք գնացել, ա՛յ վախկոտներ, մի մօտ եկէք է՞, տես ինց եմ բռնում ձեզ. ես գիտեմ, էդպէս սուս էք արել, որ չըկարողանամ ձեզ բռնել»։

(Այդ ժամանակ ներս է մտնում մայրը. Արշակը պտոյտի ժամանակ անգիտակցաբար բըռնում է մօրը ասելով՝)։

«Ը՛հը՛, բռնեցի, բռնեցի, դէ բեր հիմա քո աչքերը կապենք»։

(Արշակը աչքերը բացում է տեսնում մօրը. «Վա՛յ, մայրիկս է», ուզում է փախչել, բայց մայրը մի քանի անգամ հասցնում է մէջքին բեմի վրայ վազելու ժամանակ, ասելով՝) «ԷՍ ԷԼ ՉԵՂ ՀԻՆԳ ՈՒ ԽԱՂ». (իսկ Արշակը բեմի վրայով դէս ու դէն է վազում ասելով՝) «վայ մա՛յրիկ ջան, էլ չեմ անիլ, վա՛յ, մայրիկ ջան, էլ չեմ անիլ...

ՎԱՐԱԳՈՅՐ

Վ Ե Ր Ջ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922

„ԼՈՅՍ“

Գրախանութում վաճառում են ամենատեսակ գրքեր, դասական և գիւանական առարկաներ մատչելի գներով։

Աշակերտ—աշակերտուհիներին և դպրոցական հաստատութիւններին զիջում։

„ԼՈՅՍ“ գրախանութը ընդունում է ամենատեսակ գրքեր կոմիսիայով վաճառելու համար։

„ԼՈՅՍ“ գրախանութում վաճառւում են

Գ. Ա. թարգմ.

Ֆարաջաւոր ուսանողը	20 կ. կամ 1 դր.
Թանգ արժէ,	4 կ. կամ 4 շահի.

ԳԻՆՆ Է 20 Կ. ԿԱՄ ՄԻ ԴՐԱՆ

Դիմել՝ Թաւրիզ, Գր. Աղաջանեանին, Գրախանութ „ԼՈՅՍ“։ Օտար տեղից՝

Tauris (Perse) Gr. Aghadjanian, Librairie „LOYCE“

կամ

Тавризъ (Персія) Гр. Агаджанянъ, Магазинъ „Луйсъ“

ՀՀ Ազգային գրադարան
NL0399172

7435

891.995
Р-16